LIPANAN
JOURNAL ARMÉNIEN
INDEPENDANT

ADMINISTRATION
Rue Maarad
BEYROUTH «Liban«
DIRECTEUR—PROPRIÉTAIRE
J. ADJEMIAN

ԼԻԲԱՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹ

لبنان
جريدة ارمنية
حرة

Ը. ՏԱՐԻ ԹԻ — 696 (1) ՇԱԲԱԹ 17 ՅՈՒՆԻՍ 1933 ՀԱՏԸ 2,5 Ս.Դ.

ԲԱԺՆԵԳԻՆ
ՍՈՒՐԻԱ— Տրկ. 350 Ս. Գ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ— Տրկ. 100 ժրանկ

Պէյրութ, 17 Յունիս 1933

ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԸ

Տասնեակ մը տարի անցած է այն օրէն, երբ համաշխարհային պատերազմի արիւնոտ զարհուրանքները ապրած հայութեան սոսկալի զանգուած մը իր հայրենի աշխարհէն պոկուած ու նետուած էր անծանօթ հորիզոններու մէջ։

Դա-հայկական դրօշը իր խրախկատարներուն վրայ երբեմնի ծածանող Տաւրոսեան հայրդիներու կարաւանն էր, աշխարհի հզօրներէն լքուած որ շրջան—շրջան կուգար պատմութեան էն մեծագոյն ոնցքերու երբեմնի թատերաբեմ եղած երկիրը, որ կոչւում է Սուրիոան։

Թիւրքական բռնապետութեան լուծը թօթափած այդ երկրի մէջ կուլտուրական վերածնութեան լայն հորիզոններ էին բացուած, ազատութեան հուրով բացուած, և որի լեռներուն կատարներին վրայ հպարտօրէն փոզփուտէ ազգային անկախութեան դրօշը և ուր, վերջապէս, յաղթապանծ ճախրում է ազատութեան և իրաւունքի պարդամխօս ֆրանսական մեծ գէմոկրատիայի ոգին՝ իր կուլտուրական և իմացական մեծափառ այժի ալիքները ասրածելով ամէն կողմ։

Պատմական հանգամանքներու անկասկած գտաւորութեան հրկոդրանքին առակ Լիբանան և Սիւրիա ապաստանած հայ զանգուածներին կրգրաց ընդունեցին երկրի բնիկները՝ առանց ցեղի, կրօնի և դասակարգի խտրութեան։

Ազգերու յարաբերութեանց հոգեկան դաշտին մէջ, Լիբանանցիներու և Սիւրիացիներու եղբայրական այդ վերաբերումը, հայ ժողովուրդին հանդէպ, եղաւ Հայ և Արաբ ժողովուրդներու միջև կուլտուրական, անտեսական և հոգեկան յարաբերութեանց չգիտցի էն առաջին օրակը։

Եւ այդ յարաբերութիւնները զարգանալով, իրենց ալրթին մէջ ասին նորանոր գործօններ և սառնալով, որոշ ձեւ, եղան հաստատուն խարիսխը. հայ—արաբական կուլտուրական եղբայրութեան մը, զոր օրէց-օր ամրածուելով, իր լայնութեան և խորութեան մէջ, Դասաւ բարձունքի մը, որաեղից՝ արդէն կը գիտուէր աւելի հեռաւոր հորիզոններ։

Եւ այսպէս.— Հայ ժողովուրդը դարձաւ Սիւրիսանի վերածնութեան և յառաջդիմութեան ըեալ գործօններէն մէկը։

Այդ իրողութիւնը տեսան հիւրընկալ երկրի բարձրագոյն իշխանութիւնները, ինտելիգենցիան և ժողովուրդները։

Նրանք տեսան, որ հայ ժողովուրդը իր ազգերգութեան օրերում իսկ ակնբախօրէն ցուցայոյտց իր ցեղային ստեղծագործող ոգին, իր ապրելու կամքը, իր շինարար ալժը, և խոր հաւատք մը՝ իր լաւագոյն ապագայի նկատմամբ։ Իրական փաստերով նա մի անգամ ևս եկաւ և ապացուցեց, որ Հայ ժողովուրդն էլ ունեցած է ազգերու համերդին մէջ պատմական առաքելութիւն մը, որի անիւը կանգ չէ առած, ինչ որ կեանքի նրա դոյութեան նիսկրիմ թշնամիները, այլ շրջանակում է իր ընթացքը իրերի հոլովոյթին մէջ՝ հարթելով բազմապիսի դժուարութիւններ։

Հայ—արաբական նոր ակնուած արարերութեանց զարգացման իրը արամաբանական հետեւանք. երկրի բարձրագոյն իշխանութիւնները Սուրիոան ապաստանած հայերին ընդունեցին և ճանաչեցին իբրեւ երկրի քաղաքացիներ՝ իրաւունքի և պարտականութեան տեսակէտից բացարձակապէս իրաւահաւասար երկրի բնիկներուն հետ։

Եւ այդպիսով Սիւրիոյ պատմութեան մէջ բացուեց մի նոր էջ, որտեղ պիտի արձանագրուէր երկրի կուլտուրական և տնտեսական ազդակներէն մէկը դարձաց հայ ժողովուրդի խօսքն ու գործը։

Հէնց այդ օրերին էր, երբ, այս երկրի հազարամեայ պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, լոյս տեսաւ հայերէն թերթ մը — «Լիբանան», զոր կոչւում ունէր լինելու այն հայելին, որը տեսանելի պիտի դարձնէր հայ ժողովուրդի արամադրութիւնները, ցանկութիւնները և կուլտուրական սահմանագործութիւնը կազմ.— հայ ժողովուրդի պատկերը։

Եւ «Լիբանանը» հէնց առաջին օրն իսկ անվարան կերպով պարզեց հայ—արաբական կուլտուրական եղբայրութեան դրօշը՝ իբրև իր նշանաբանը, հասարակական կեանքի դաշտին մէջ։

Այդ էր սկզբունքը, այդ էր գաղափարը, զոր ընկած էր հայ—արաբական յարաբերութեանց հիմքին մէջ, ոչ իբրև բանաձեւի, այլ իբրև արամաբանական հետեւութիւն երկու ազգերու միջև սկսուած կապերու զարգացման, ապա և պայմանների բնականոն ընթացքի։ Եւ այդ գաղափարի առաջին արտայայտիչը, այլ և ջերմ տարածողը հանդիսացաւ — «Լիբանան»։ Այդ եղաւ նրա արծարծած մտքերու ծանրութեան կեդրոնը, նրա պարզած տեսութեանց կեսրոնական գաղափարը. խնդիր չէ թէ թեթեւ տայթաքաւումներ էլ տեղի ունեցած լինին նրա ընթացքին մէջ կամ փոքրիկ շեղումներ հիմնական ուղղութեան այդ գծէն. որպիսին եղած լինելու է ոչ այլ ինչի, այլ միայն խմբագրական թերութեանց և չիշ հասկացողութիւններու արդիւնք։

Թէ այդ վերջին հանգամանքի, և թէ մեզի անծանօթ, թերեւս, այլ պատճառներու շնորհիւ, անցեալ տարւայ վերջերին, Հոկտեմբեր 11-ին, կառավարութեան կողմէ անորոշ ժամանակի մը համար կասկոյտուեցաւ թերթը։ «Լիբանի» պակասը շատով զգալի դարձաւ հանրային կեանքի մէջ, մանաւանդ ներկայ օրերում, երբ գիւղատնտեսական, կուլտուրական բազմաթիւ խնդիրներ, որոնց կարեւորութիւնը տեսիրաժեշտ կը դարձնէ առարկայական, հրապարակային բազմակողմանի քննութիւն մը՝ զանազան շահերու լոյսին տակ և գործնական տեսակէտից։

Հայ ժողովրդական զանգուածները, ինչպէս և գոմիկրատական մարտուրակնութիւնը ակնդէտ սպասում էին թերթի վերահրատարակութեան։

Եւ դա չուշացաւ։

Թերթիս անօրէնութեան, ապա և հայ ու արաբ ազնիւ մարդկանց կողմանէ կատարուած աշխատանքներուն իբր արդիւնք՝ Լիբանանի Հանրապետութեան Նախագահին թիւ 2061 և 31 Մայիս թուագիր հրամանագրով թերթի վերահրատարակումն արտօնուում է։

Եւ «Լիբանան» վերսին հանրային կեանքի ասպարէզ է իջնում նորէն պարզած, ինչպէս միշտ, Սուրիոանի բոլոր ժողովուրդներու կուլտուրական եղբայրութեան դէմոկրատական դրօշը։

SUNIK

ՇԱՐԼ ԴԷ ՊՊԱՍ
Լիբանանի Հանրապետութեան
Նախագահ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ, ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հաճոյքով կը յայտարարենք ի գիտութիւն մեր բոլոր յարգելի բաժանորդներուն, ընթերցողներուն եւ հասարակութեան, նորին Վսեմութեան Լիբանանի Հանրապետութեան Նախագահի թիւ 2061 եւ 31 Մայիս թուագիր հրամանագրովը արտօնուած թերթիս վերահրատարակումն՝ թէ հայերէն եւ թէ Ֆրանսերէն լեզուներով։

Ուրախ ենք այս առթիւ յայտնելու նաեւ՝ որ ձեռնարկումիս լուրջ բարեփոխութեանց, թերթիս խմբագրական ու վարչական գործերը կոտարեալ դնելու համար։

Ցաւով ենք, որ մեր յարգելի բաժանորդներ, ընթերցողներ եւ ազնիւ բարեկամներ պիտի զրկենք մեզ մեր ձեռնարկին մէջ։

Վարչութիւն «ԼԻԲԱՆԱՆ»ի

ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ԿԱՐԾԻՔ ՄԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԻ ԿԵԱՆՔԸ

Դրեց՝ ՌԱՖԻՆՏՐԱՆԱԹ ԹԱՏՕՐ

Աշխարհահամբաւ հնդիկ բանաստեղծ Թակորի այս տեսութիւնը իր տեսակցութեանը համար, «Le Mois» հանդէսէն թարգմանաբար կը ներկայացնենք հայ գրասէր հասարակութեան։

Ցեղափոխական շրջան մը կ'ապրինք։ Մոր հին համոզումները, հաճոյքներն ու նոյնիսկ սահմանները փոխուելու վրայ են։ Ոչ մէկ անցեալ հոլովոյթ, այլեան արագ, այլեան չնախատեսուած յեղաշրջումներ յառաջ չբերաւ ազգերու և անհատներու մտայնութեանց մէջ։

Բարքերը փոխուած են։ Ու կեանքի բոլոր փոփոխութիւնները ձեռք բերելու ծայրահեղ ծարաւէն, ներկայ սերունդը ապրելու արուեստը մոռցած է։ Այլեւս ժամանակ չկայ մտածելու, այլեւս ժամանակ չկայ կեանքի մանր հանգիստները ծաւալօրէն վայելելու, այլեւս ժամանակ չկայ հոգին սնանող ընթերցանութիւններու համար. շատ ծանր է ներկայ շրջանը, կեանքի պայքարը շատ դաժան, որպէսզի թոյլ տրուի մարդոց հետաքրքրուելու իրենց գործնական սահէ շահ չբերող կայցնող բաներով։ Այդ իսկ պատճառով բանաստեղծութեան տարուեսը փայլուն վիճակի մէջ չէ։

Շատ քիչ բանաստեղծներ կան, ու նոյնքան քիչ բանաստեղծական գլուխ—գործոցներ, որովհետեւ ներկայ շրջանը էապէս զեմ է թէ մեկին և թէ՛ միւսին։

Եւ յաւակնութիւնը չ'ունիմ հասկնալու այս շրջանի ձգտումները, բայց չեմ կրնար չ'նկատել ժամանակակից բանաստեղծութեան խրզմալի վիճակը։ Եւ չեմ յանդգնիր հաստատելու թէ այս բոլորին պատճառը, այսպէս կամ այնպէս, պատերազմն առաջացած տարուեղներու մարդին և հոգու վրայ պատերազմի և անոր բազում ազդեցութիւններու հետեւանքն է։ սակայն իրականութիւնը այն է, որ այս պահուս գժուար է բանաստեղծութեան ծաղ'իլը։ Պարզ է որ խօսքն տինամայի և ճարտարութեան, զբաղանը չարս ժամուայ մէջ կլանուող բազմաթիւ փոքրաւութիւններու, նոր գիւտերու, զարգացումներու, քան։

Արագութեան պաշտամունքը։ Ես արտաքուստ կ'ուզեմ արագութեան փոքրիկհոգմը— որ տիրացեր է մարդերու ու հոգիներուն, պատճառ կը դառնայ որ իւրաքանչիւր անձ ճիգ ու ջանք թափէ գերազանցելու իր հարեւանը, կարելի եղածին չափ ամենաարագին կեանքն ապրելով։

Արդ, թեւ արձգութիւնը մեզ կը հարցնէ որոշ յոլովութեան, բայց ես չեմ հաւատար որ ան ի վիճակի ըլլայ ամենագոյն չափով գեղեցկացնելու կեանքը և բնականոր մարդկութեան երջանկութիւնը։ Այս պիսով երիտասարդ սերունդը թէեւ արագութեան շնորհիւ ձեռք կը բերէ ընդարձակ անզկութիւն—բայց միեւնոյն ատեն շատ խնդիրներու շուրջ, իր զգայնութիւնը կորսնցնելու վրայ կը դանուի։

Այս բոլոր աւելորդ ձգտումները հոմայն աշխարհը գրաւելու վրայ են, որովհետեւ ոչ մի ժամանակ գաղափարները այլեան արագ չ'համբարդեցին, ոչ մի ժամանակ ամենահեռաւոր երկիրները այլեան մօտիկ չեղան իրարու իրենց մարդերով։

Ես կը տարբերիմ այն արագութենէն, որով այս հիւանդութիւնը կը տարածուի, մասնաւորապէս Հիւսիսային Արեւելքը։ Գենկիզխոյ մէջ տակաւին կային մեծ թիւով մարդիկ որոնց զգայնութիւնը չէր տարուած նոր բարքերով դանոնք կը յարգէին երիտասարդ բանաստեղծները, որոնք ակնածալի թիւով, կը նուիրուէին գեղեցկութեան պաշտամունքին, և որոնց աշխատութիւնները ուրախութեան ապրիւրներ էին բազմաթիւ ընթերցողներու համար։ Բայց կամաց կամաց Հնդիկներն ալ տարուեցան ժամանակակից ոգւով, որը, ինչպէս ը ի, ամենա տենդագին է բանաստեղծութեան համար։

Ըսած են և գրած են, որ բանաստեղծական արտայայտման արկարացումը հետեւանք է վերջին երեսուն քառասուն տարիներու ընթացքին գիտութիւններու ունեցած յաջողութեան։ Բայց ո՛չ. գիտական բարգաւաճման մի շրջան հարկագրականօրէն չարաբաստիկ չի կրնար ըլլալ բանաստեղծութեան։ Մեկ ճշմարիտ վտանգը այն է, որ ժամանակակից կեանքի ցնցումներու մէջն, աշխարհը ցիչ առ ցիչ անկարող կը դառնայ բանաստեղծութեան, ու նոյնիսկ բանաստեղծութեան գեղեցկութիւնը զգալու։ Զատմելի զլեռի մը հատատ

Ամենայն ինչ ... ամենայն ինչ ... ամենայն ինչ ...

ՌԱԲԻՆԴՐԱՆԱՏ ԹԱԳՈՐ

Համաշխարհային հռչակ ժայռոյ նդիկ մեծագոյն բանաստեղծ Ռաբինդրանատ Թագորը որանից երեք տարի առաջ, իր Եւրոպա ունեցած այցելութեան պարագային, գտնուելով աշխարհի մեծափարթամ մայրաքաղաքին մէջ— Պարիզ։

«Միջազգային բարեկամութեան» կազմակերպութեան մէջ ի՛ պատիւ Թագորի անկէ—հաշկերոյթ է դրուած նոյն նկերակցութեան կողմէ՝ իր բոլոր անդամներու մասնակցութեամբ։ Ճաշասեղանը բոլորուած են Պարիզեան մամուլարանի ուէքսորը, պրոֆեսորներ, ժուրնալիստներ, գրողներ, ակադեմիկոսներ, դիւանագէտներ. այնուհետեւ գիտական և գրական Պարիզը։

Ռաբինդրանատ Թագորը նստած է սեղանի կեդրոնում՝ գլուխը գրած մարքէ փափաղ և տարօրինակ ճանթիլի—ապայի մը մէջ։ Գեղանուխ իմաստունը օժտուած է զարմանալի ուշքերով, զոր կը յատկանշէ անգարաութիւն, բարութիւն և իմաստութիւն։

Զայնը քնքոյշ է՝ ինչպէս պատանի կամ աղջկայ.— բարակ, հանդարտ, երգեցիկ։ Ուշադիր կերպով ու մտածկոտ նա ունկնդրում է հոգեորներին, որոնք քարոզի են կանգնում բենց տեղերից, վար գնում անձամբ ները և ֆրանսերէն ու անգլերէն լեզուներով արտայայտում մեծարանքի և հիացմունքի խօսքեր։

Եւ Թագորը պատասխանում է։

Նա խօսում է Արեւմուտքի և Արեւելքի մասին, և ժխտում նրանց հակադրութիւնը, յայտարարելով՝ որ Արեւմտեան քաղաքակրթութիւնը պատանում է ամենքին, համայն մարդութեան։ Նա պատասխանում է Արեւմտեան գալուստի զուտ նիւթական ընդունելութեան դէմ։ Եւրոպացուն ոգինա համարում է Իդեալիզմի բարձր արտայայտութիւն, և հաստատում, որ աշխարհը երբեք չի կարող կառավարուիլ ոչ բիրտ ուժով, չ էլ մի միայն նիւթական շահերով։ Երկոյնս Եւրոպական կեանքը փարդող խնդիրները նա համարում է համայն մարդկութեան համար հասուր, այլ և յուսիանական հարցեր։

Բոլոր ներկաներուն մէջ միայն Թագորն է նստած, Եւրոպացիներու աչքին տարօրինակ թուացող իր մարմնէ փափաղը գլխին։ Եւ սակայն, այդ պարագան և ոչ ոք վիրաւորուած է գտնում. զի նրան մեծարելու համար ժողովուած բարձր ինտելիկենցիան, — Պարիզի գրական և գիտական աշխարհի ընդրանին —, լաւ իմաց, որ մարդարէներն ու փիլիսոփաները ազատ են ամեն ձեւակերպութիւններից, արարողութիւններից՝ իրենց շարժուձեւերի, վարուելակերպի, հագուստակապուստի, նիստ ու կացի և արտայայտութեան ձեւերուն մէջ։ Նրանք գիտէն, որ փիլիսոփաներուն համար չի կարող բարոյապէս պարտաւորիչ լինել էթիկէտի — բարձր հասարակութեան և արդայական ու իշխանական տաւնեֆուսովորոյթներու ու ձեւերու կանոնները։ Կարճ, — հանճարը չի կարող հանգուրժել ոչ մի կապանք, բացի խղճից, զոր արդարութեան բարձրագոյն արտայայտութիւնն իսկ է։

Մարդարէներու և փիլիսոփաներու համար միևնոյն է թէ ուր են գտնուում.— արքայական շքեղ պալատում թէ խաշնարածի մը վրանին տակ, կամ օրանց հետ են խօսում. աշխարհական բանուորի մը, թէ ասատուածավախ ճգնաւորի հետ, մեծափարթամ հարուստի մը, թէ ազքատ Ղազարոսի հետ։ Այդ տեսակէտից հանճարը մի կանոն ունի միայն, որ կիրարկում է ամենուրեք և ամէն ժամանակ։ Նրանց համար բոլոր մարդիկ հաւասար են, ամենքի մէջ էլ մարդն ու մարդկայինն են փնտրում, տեսնում, և հեռատես իրենց վերաբերումը ամենքի հանդէպ էլ միանոյն է։ Եւ այդ պարագան հինհինաւուրց ժամանակներից մինչև նոր—նորագոյն ժամանակները իմացած ունի և Արեւելքը և Արեւմուտքը, և ըստ այդ էլ գերք ունեցած նրանց հանդէպ, զոր ըստ ամենայնի ամենուրեք և միշտ էլ մեծայարգ եղած է։

Թագորը պաշտպանում է Արեւմուտքը. զի քաջ գիտէ որ Արեւմուտքն է հատատել մարդու և քաղաքացու գաղափարը, որ մարդու և քաղաքացու իրաւունց դեկլարացիոն — համընդհանրական հաւատարուեան նշաւաւորագոյն ազգը յայտարարած ունի ֆրանսական ազգային ժողովը՝ 1789 թուին։ Եւ Արեւելեան ազգերը երբ արթնանալով ցանկանում են իրենց օրիգինալական կեանքի կարգ ու սարքը հիմնաւորել ուելի արդար և բարոյական սկզբունքներու վրայ, ապա իրենց հայեացքները ուղղում են հէնց նոյն Արեւմուտքին, մարդու և քաղաքացու իրաւունց դեկլարացիոն հոչակող ֆրանսական մեծ դէմոկրատիայի պատգամներին, որոնց սահմաններից դուրս չիք մարդու անհատական ազատութեան և իրաւունց պահպանուելիքեան համար ուրիշ միջոցներ։

Ռաբինդրանատ Թագոր արեւելեան իմաստուն չէ միայն, այլ օրինզերական խորհող միտք, փիլիսոփայ, հանճար։ Նա — համայն մարդկութեան հետ է։

Եւ հէնց դրա մէջ էլ կայանում է նրա միջազգային մեծութիւնը և փառքը։

Եւ հէնց դրա համար էլ նրան հանդիպում ունկնդրում են աշխարհի բոլոր ժողովուրդները, մեզի յիշեցնելով հին յոյներու այն իմաստունի խօսքը, թէ— փիլիսոփաներու լեզուն ասկէ շղթաներով կապուած է ունկնդիրներու ականջներին հետ։

ՍԻՒՆԻՔ

չանն է ասիկայ. նման հեռաք երբեք չի սկսուիր երիտասարդ ցեղերու մէջ, որովհետեւ բ-նատուղութեան իմաստը երիտասարդ դաստեան բնորոշիչ յատկութիւնն է։

Բայց այդ զգայարան մէն է որ մշակուելու պարագային դիւրութամբ կ'անհետանայ։ Իսկ անոր կատաղը անփոխարինելի է, որովհետեւ անոր հետ կ'անհետանայ կեանքի ամբողջ թարմութիւնը, և ամբողջ գեղեցկութիւնը։

Թրգմ. ՋԻՒԱՆ

ԻՆՁՈՒ ԱՑԴՊԷՍ ՎԱՐՈՒԵՑԻՐ

I

Նա,—

Երկնքի նման միշտ այլափոփոխ,
Մերթ լուսաշող և պայծառագէմ,
Մերթ մռայլուած ու դժնեանիկ.
Երբեմն ուրախ ու զուարթ,
Երբեմն տխուր ու արտուսմ.
Պահ մը խաղաղ ու անդորր,
Այլ արտաքոյզ, մարդաղուռ, ընդոստ,
Ժպիտը թեթեւ, զարոյթը արդար,—
Գուսանը,

Դիտուում է խարհուրդը մեծ իր մէջ ծրարած
Երկնային համակ լուսազարդ խորերին՝
Իրերի խորհուրդը իմանալու.
Եթէ կայ միայն։

II

Նա,—

Զարտասանչ մարքերու ծովին մէջ սուզուած,
Իր ոգ[illegible]ութեամբ խալորէն յուզուած,
Հայեացքներ անհագ անհուանին ուղղած,—
Գուսանը,

Դիտուում է ստեղազարդ կապոյտին համայն,
Ճգնում թափանցել երկնային խորհուրդներուն մէջ՝
Հասկանալու համար իմաստը կեանքի,
Եթէ կայ միայն։

III

Լազուր երկնքի կապոյտ ալքերու անհուն խորերէն
Էութիւն ցնցող ձայն մի է լսուում.—
Զուր է Գուսա՛ն, քայ հոգեմաշ որոնում,
Երկնային բարձունքներու անծայր ալքերում.
Զուր է անհուանին մէջ ամեն թափառում.
Կեանքի իմաստը քայ մէջ է գտնուում,
Իրերի խորհուրդը այդտեղ է գտնուում։
Նայիր քայ շուրջը,— կանգու մը հեռուն
Բարձր ի գլուխ ճեմող գեղանուն՝
Հերոսներին հուր ներշնչող,
Աստուածներին ստրի հանող,
Մի անման գիրուհի,
Աստուածային գեղեցկութեամբ
Պատկուսր թագուհի։
Պիտի տեսնես որ նրա մէջ է բովանդակուած
Խորհուրդը երկնային, իմաստը կեանքի,
Որ սէր է կոչուում, որ իսկ է Աստուած։

IV

Մէկ էլ յանկարծ, սեւ, հեռուստ տեղերէն,
Ուր ապրում են խլուրդները գ'ոնամած,
Ուր պարում են հրէշները մթկացած,
Հողմ է փչում, փոշի ցանում երկնքում։
Երկիր արար համակ խաւար է պատում,
Եւ սեւ մթին ամպրոպները գիզուում են։
Դիմխային ինչ—ինչ ձայներ
Ամեն կողմից լսուում են։
Եւ կանչում է երգն տխուր՝
Դէլֆին չարախս։
Եւ նրա կանչը մէկնարանող
Վարպետ—կախարդ, վհուկները ոռնացող,
Փոզով, թմբուկով հրաւիրում են
Բազում մարդկանց ստահոս,
Եւ պատուիրում.—
Մութ տեղերում դիրք բռնած
Անուանարկել աշխարհն,
Պատչգամբում լուռ կեցած,
Իր հայեացքը մատնուլուած լուսագուսանինուներած
Աստուածային գեղեցկութեամբ պատկուսր,
Զքո՛ռ, անմեղ գեղուհին։
Նա լսում է սեւ սատանեան կանչերը,
Հոգուով, մարմնով, ողջ էութեամբ այլայլուում։
Նրա աչքում երեւում է արցունք մը—գոհար։
Եւ ամօթից վարդի նման ալ—կարմրած,
Գոգարիկ գլուխը դէպի գետին խոնարհ ած,
Եղանում է լուռ գուսանի ձայնը լսել՝
Հաճեպարար, փրկարար։

Որոտում են երկինք—երկիր,
Կարծես փոզեր մարատոն.
Եւ յուզմունքով նա լսում է՝
Խրախ, հպարտ ձայն մի գոռ...

(Շարունակելի) SUNIK

ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔ

ՄԱՐԶԱԿԱՆ

Անցեալ Կիրակի Դամասկոսի Հ. Մ. Ը Մ. ին և Ամմանի Անգլիական օդանաւարգներու միջև տեղի ունեցող ֆութպոլի մրցումին մէջ առաջինը փառաւոր յաղթանակ մը տարած է 0 ի դէմ 7 կոլով։

Կ'իմանանք որ նոյն յաղթական խումբը Պէյրութի մէջ հանդիպում մը պիտի ունենայ տեղւոյս լաւագոյն խումբերէն D. P. H. ի հետ։

Նկատի ունենալով երկու խումբերուն ալ կարեւորութիւնը, մրցումը կը խոստանայ շատ հետաքրքրաշարժ ըլլալ։

ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ

Այսօր երեկոյեան ժամը 8,30 ին, Հ. Ե. Ընկերակցութեան սրահին մէջ, Ամանօրի Ազգ. Վարժարանին ի նպաստ, պիտի ներկայացուի «ԹԱԼԷԱԹԻ ԱՆԿՈՒՄԸ» Հեղ. Ս. Շահէնի կը խաղան Տիկին Սեռա և Տէր և Տիկին Մենաիլեանները և ուրիշ տիրոջներ։

ՀԱՃԻ ՄՈՒՐԱՏ ՃԱՊՐԻ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Ամեն մարդ կը յիշէ որ Հայ Վարիչ Օննիկ Պոզիկեանի ապաննութեամբ ամբաստանուած Հաճի Մուրատ Ճապրիի պաշտպան փաստաբանն էր մէթր Էմոն Ռապպաթ։

Պ. Ռապպաթ շատ մեծ ծառայութիւն մը չմատոյց Ճապրիին, պարզապէս անոր գլուխը կախաղանէն ազատեց...

Այս փոքրիկ ծառայութեան համար է որ Պ. Ռապպաթ Ճապրիէն պահանջած է 600 հնչ. ոսկի, բայց այս վերջինը իր գլխուն գինը չափազանցեալ գտնելով, չէ ուզած վճարել։ Պ. Ռապպաթ դատարան դիմելով յաջողած է Ճապրին դատապարտել տալու սոյն գումարին վճարման։

ՅԱՋՈՐԴ ԹԻՐՈՎ

«Լիբանան»ի յառաջիկայ թիւէն սկսեալ պիտի հրատարակենք...

Ա) Հայ Ցեղափոխական իրական կեանքէ առնուած Ս. Լալոզարի «ԵՐԵՔ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ»

Աշխատութիւնը՝ յոյժ հետաքրքրական բովանդակութեամբ։

Բ) Հայ Ցեղափոխութեան անցեալէն՝ Հազարաւնիի Ցուշերը։

ԴԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ

ԱՐՋԱԿՈՒՐԴ ՁԿԱՅ

Սիւրիոյ Դատական Նախարարութիւնը նկատելով որ իր պաշտօնէութեան օրվրական երկամսեայ արձակուրդը շատ ետ կը ձգէ գատարանական գործերը, որոշած է—կրճատել — այս արձակուրդէն զրկել դատաւորները։

ԱՔՔԵՐՆԻԴ ԼՈՑԱ

Կը լսենք թէ Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Խապայեանը իր յոբելեանական հանդէսը յաջողութեամբ աւարտելէ յետոյ ամբարանց պիտի գնայ եղեր ազգաշէն գործունէութեան դաշտին մէջ գոյացուած ուժերը կազդուրելու համար։

Պրծաւ գնաց։

ՑԱՐԱԿԱՆ ՏՐԱԺԵՏԻԱՆ

(Եկատերինբուրգի Սպանութիւնը)

Ռուսական մեծ յեղափոխութեան փոթորկայոյզ շրջանին մէջ, երբ տակաւին շարունակուում էր միջազգային կեանքը հիմքերին մէջ ընդող, ոստանեցնող համաշխարհային պատերազմը, օրի ծուխ ու բոցին մէջ ծնունդ էր առած Ռուս Ցեղափոխութիւնը, մէկ կողմից Համառուսական Հիմնադիր ժողով գումարելու անդգին աշխատանքներն էին առնում իշխանութիւնները, և միւս կողմից ապստամբուած Ֆինլանդիոյ Ֆինլանդ ճամբարած ռազմը արդէն Պետրոգրադի դուռներն էր ծեծում։

Եւ մինչ յեղափոխական բարդութեան յեռնակուտակ ալիքները հրաբորբոք խորերեն ակնդակոչ հնչում էին համայն երկիրը աւերիչ անարխիայի հրապարակին մէջ նետած շարք մը հիմնական խնդիրներու արմատական լուծման հրամայական անհրաժեշտութիւնը, կերենսկու ժամանակաւոր կառավարութիւնը պնդում—փաստում էր, պետական իրաւունքի դէմոկրատական հանգոյցութեան դեռնի վրայ կեցած, որ միայն ու միմիայն Համառուսական Հիմնադիր ժողովը բարձրագոյն լիազորութիւն ունի լուծելու դիզուած բոլոր խնդիրները, նամանաւանդ հաշուութեան, հողային և հարարկարգի հնաբաց հարցերը։

Հէնց այդ ժամանակին էլ Ռուս հասարակական կեանքի արամագիծ օրէն իրարու ներկայ, մեկի դայութիւնը միւսի մահով պայմանաւորուած երկու գործոններ անհանգստութեան ակնթարթ նշաններն ունէին ի՛ յայտ բերած, և առ այդ խօսլաթափ գործունէութեան մը լծուած էին։

Այդ թեւերէն մէկ,աւյալիստներ, որոնում էր մինչեւ Սահմանադիր ժողովի գումարը վերականգնել միապետութիւնը, և այդպիսով Հիմնադիր ժողովը գնել կատարուած իրողութեան առջեւ։ Հէնց այդ իսկ նպատակու էլ տեղի ունեցաւ ժեներալ կորնիլովի գինուած ելոյթը, մը՝ զուսած ժամանակաւոր կառավարութեան դեմ, իբր թէ անգլիական ներքին գրգռումներով՝ ինչպէս ասում է Ա. Ֆ. կերենսկին։

Կորնիլովի այդ ելոյթը դէմոկրատական մասնաւորականութեան և ի մասնաւորի յեղափոխական պրոլետարիատի կողմից, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

Հակա—յեղափոխական այդ բացայայտ ելոյթէն դեռ առաջ, բանաւորական և սալդատական պատգամաւորներու խորհուրդի՝ որոնց կեդրոնացած էին համառուսական ազգաբնակչութեան ուշադրութիւնը, ճնշումի տակ կերենսկու կառավարութիւնը արմատական միջոցներ կիրարկելու հարկադրուեցաւ, հակա—յեղափոխութեան վտանգը իր ունեցած արմատներուն մէջ խափանել կարենալու համար։ Այդ իսկ նպատակու էլ ժամանակաւոր կառավարութիւնը գեկրետային կարգով Ռուսաստանը հռչակեց դէմոկրատական հանրապետութիւն, ապա լուծեց Պետրոգրադի կոմիտէն, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

Հակա—յեղափոխական այդ բացայայտ ելոյթէն դեռ առաջ, բանաւորական և սալդատական պատգամաւորներու խորհուրդի՝ որոնց կեդրոնացած էին համառուսական ազգաբնակչութեան ուշադրութիւնը, ճնշումի տակ կերենսկու կառավարութիւնը արմատական միջոցներ կիրարկելու հարկադրուեցաւ, հակա—յեղափոխութեան վտանգը իր ունեցած արմատներուն մէջ խափանել կարենալու համար։ Այդ իսկ նպատակու էլ ժամանակաւոր կառավարութիւնը գեկրետային կարգով Ռուսաստանը հռչակեց դէմոկրատական հանրապետութիւն, ապա լուծեց Պետրոգրադի կոմիտէն, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

Հակա—յեղափոխական այդ բացայայտ ելոյթէն դեռ առաջ, բանաւորական և սալդատական պատգամաւորներու խորհուրդի՝ որոնց կեդրոնացած էին համառուսական ազգաբնակչութեան ուշադրութիւնը, ճնշումի տակ կերենսկու կառավարութիւնը արմատական միջոցներ կիրարկելու հարկադրուեցաւ, հակա—յեղափոխութեան վտանգը իր ունեցած արմատներուն մէջ խափանել կարենալու համար։ Այդ իսկ նպատակու էլ ժամանակաւոր կառավարութիւնը գեկրետային կարգով Ռուսաստանը հռչակեց դէմոկրատական հանրապետութիւն, ապա լուծեց Պետրոգրադի կոմիտէն, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

Հակա—յեղափոխական այդ բացայայտ ելոյթէն դեռ առաջ, բանաւորական և սալդատական պատգամաւորներու խորհուրդի՝ որոնց կեդրոնացած էին համառուսական ազգաբնակչութեան ուշադրութիւնը, ճնշումի տակ կերենսկու կառավարութիւնը արմատական միջոցներ կիրարկելու հարկադրուեցաւ, հակա—յեղափոխութեան վտանգը իր ունեցած արմատներուն մէջ խափանել կարենալու համար։ Այդ իսկ նպատակու էլ ժամանակաւոր կառավարութիւնը գեկրետային կարգով Ռուսաստանը հռչակեց դէմոկրատական հանրապետութիւն, ապա լուծեց Պետրոգրադի կոմիտէն, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

Հակա—յեղափոխական այդ բացայայտ ելոյթէն դեռ առաջ, բանաւորական և սալդատական պատգամաւորներու խորհուրդի՝ որոնց կեդրոնացած էին համառուսական ազգաբնակչութեան ուշադրութիւնը, ճնշումի տակ կերենսկու կառավարութիւնը արմատական միջոցներ կիրարկելու հարկադրուեցաւ, հակա—յեղափոխութեան վտանգը իր ունեցած արմատներուն մէջ խափանել կարենալու համար։ Այդ իսկ նպատակու էլ ժամանակաւոր կառավարութիւնը գեկրետային կարգով Ռուսաստանը հռչակեց դէմոկրատական հանրապետութիւն, ապա լուծեց Պետրոգրադի կոմիտէն, որի կամարարայիչն էին ներկայանում Բանուորական և Սալդատական պատգամաւորներու Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները, ամենայն իրաւամբ նկատուեց պարզապէս զինուած հակա—յեղափոխութիւն։

ՆԱՊՕԼԵՕՆԻ
ԻՆՔՆԱՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԸ

1814 թուին, Ապրիլի 12, լոյս 13—ի գիշերը, Պարիզի մօտ գտնուող և գաղնակիցներէ դրաւուած Ֆոնթենբլոյի մէջ գահէն հրաժարուած Նապոլէոնը ինքնասպանութեան փորձ մը արաւ։

Այդ էպէոդը — դրուագը վաղուց յայտնի է։ Բայց, առաջին անգամ լինելով, այժմ է որ մենք գիտենք արժիրգական գիշերուայ մանրամասնութիւնները։ Այդ մասին պատմում է մարշալ Կոլէնգուրը իր յուշերուն մէջ՝ տպուած «Ռեվիւ ը Մոնդ» պարբերականի 1930 թուի համարներից մէջ։

Մարշալ Կոլէնգուրը այն անձնաւորութիւնն է, որ Նապոլէոնի յանձնարարութեամբ բանակցութիւններ վարած ունի յաղթական դաշնակիցներուն հետ՝ կայսրի ճակատագրի մասին, ապա և նրա անուններից ել տարբերագրած գահէն հրաժարումի պայմանագիրը։

Ապրիլ 12 ի երեկոյան, մարշալ Կոլէնգուրը բանակցութիւնները աւարտելէ յետոյ, վերադառնում է Ֆոնթենբլո, Ֆրանսայի և Եւրոպայի երեկոյ տիեզերական իրաւունք մը միայն բերելով։ Բերելով փոքրիկ կղզին վրայ տիրելու։ Նապոլէոնը խնդրած ունի եղեր, որ իրեն արուի Ֆոնթենեան կամաւութիւնը։ բայց դաշնակից միապետները— մօնարխները մերժած են Նապոլէոնի այդ խնդրանքը։

Կոլէնգուրը երկարօրէն զրուցում է կայսրի հետ, պատմելով նրան եղած բանակցութեանց մանրամասնութիւնները։

Նապոլէոնը քնանալու համար իր ննջարանը գնալու պարագային ասում է հառաչանք։—« Ես բաւական տարել եմ։ Խեղճ Ֆրանսա? Ես չեմ ուզում տեսնել քոյ անպատուութիւնը? Կեանքը ինձի համար առնելի չէ»։

Ապրիլ 13 —ի առաւօտեան ժամը 3—ին Կոլէնգուրին քաւնից արթնացնում և կանչում են կայսրի ննջարանը։ Նապոլէոնը նստած՝ էր եղել մահճակալին վրայ՝ այլայլուած, գէմքը փոխուած վիճակի մը մէջ։ Նա կը կիթայ եղեր, և քան երեւոյթին, սառուցիկ ցաւեր զգացած ունի։

Կայսրը հրամայում է Կոլէնգուրին, որ բարձի տակից վերցնէ կայսրական հագուստագրուած նամակը ու թաղցնէ զայն։ Յետոյ Կոլէնգուրը, Նապոլէոնի հրամանաւ, կայսրի կարինեթից բերում է նեռէսները (որգուզարդի և կարելու, հիւսելու ու կանացիական, այլ աշխատանք կատարելու իրեր պարունակող փոքրիկ արկղ), որի մէջ պահուում է եղեր թղթատնակ մը՝ կայսրական նամակները և նրա որդու նկարները բովանդակող։ Նապոլէոնը զգացող ձեռքով բռնում է Կոլէնգուրի ձեռքը և ասում — «Շատով այլեւս կենդանի չեմ լինիլ։ Այն ժամանակ իմ նամակը դուք կուտաք կայսրական. իսկ նրա նամակները և թղթատնակը կը պահեք ձեզ մօտ և կը յանձնեք որդուն, երբ նա կը մեծնայ»։

Կայսրի ձայնը սկսում է ուռելի եւ թանալ։

«Ինչպէս դժուար է մեռնիլը— մրմնջում է նա,— ինչպիսի դժբախտութիւն է լինել այնքան ուժգի, որ մահն անգամ չուզեր ինձի առնել»։

Կոլէնգուրը ջանում է համոզելու նրան, որ թոյլ տայ բժիշկ կանչելու. բայց Նապոլէոն մերժում է։

Կլիմոքը ուռելի ու ուռելի սառուկանում է, մարմինը պաղում, և ըսկսում են դողեր։ Կայսրը յանապէս ջանք էր թափում չը փոխելու համար։ Այդ պարագային Կոլէնգուրը հարցնում է թէ նա ինչ է զգուելու։ Կայսրը ասում է, որ ըմպած ունի օպիումի բաղադրութիւն մը։

Եւ իսկապէս էլ փոքրիկ սեղանին վրայ սակաւին ընկած կը մնար թուղթ մը, օպիումի փոշու հետքերով։ Կլիմոքը կը դառնար ուռելի ուժեղ. և կայսրը այլեւս անկարող է գտնուում ոչ հիգերուն մէջ և ըսկսում է փոխել։ Կերեւար. որ նա յուսահատութեան մէջ էր գտնուում որ գուրս կը թափեր այն թոյնը. որով կուզէ եղեր մեռցնել իրեն։

Նապոլէոնը ասում է Կոլէնգուրին, որ Մալմեզսոնի ժամանակից ի վեր իր վրայ կրում է փոքրիկ ասուփիկ մը, թոյն պարունակող, ի դէպս գործածելու համար, երբ որ թշնամու ձեռքը ընկներ։ Իրեն հաւատացուցած են եղեր, որ թոյնի այդ դոզան բաւական երկու մարդ սպաննելու համար։

Սենեակ է մտնում հոգ-մարմնը, որին Կոլէնգուրը յայտնում է պատահածի մասին։ Կանչում են Իվան մականունով բժիշկ մը։ Կայսրը պաղատում է որ իրեն ատ թոյնի ուռելի զօրութիւնը դոզա—տեղաղափ։ Բժիշկը, ինքնին, մերժում է, բայց փոխանակ օգնելու կայսրին, դուրս է գալիս սենեակից։ Թաւում ձիւն վրայ, որը կը պատած է եղել դղեակի ցանկապատին, և ոլանում ինչ որ տեղ մը։ Կոլէնգուրի պատմածից չ'երեւնար, որ ուրիշ բժիշկ հրաւիրած կամ հիւանդին հանգիստ տուած լինին։ Եւ Նապոլէոնի ուժեղ բնութիւն իսկ կատարած ունի եղեր հանգիստի գործը։

Երկար ժամանակ նա բարկած է եղել ատոնց զգացումի, ինչպէս կաթուածահար մը, բայց առաւօտեան ժամը մօտ 11—ին ինքզինքը գտնում է։

Նապոլէոնը կանչում է ադիւթանտին և կարգադրութիւններ անում Ելբա կղզին մեկնելու համար։

Տրժիքական—ազերբդական 6-7 ժամերու ընթացքին միայն Նապոլէոն պահած ունի եղեր հոգու արիութիւն։ Մինչ բոլոր շրջապատողները կատարեալ չփոթութեան են մատնուել։

«Ես կ'ապրիմ։ Մահը ինձի չէ առնում անկողնու մէջ, ինչպէս և մարտի գաշտում։ Ես քաջութիւն կունենամ ապրելու կեանքը՝ այնքան դժբախտութիւններից յետոյ։ Ես պիտի գրեմ իմ քաջերու պատմութիւնը»։— ասում է Նապոլէոն։

ՍԻՒՆԻՔ

Տեղական

Պ. ԼԱՎԱՍՍԷՐԸ ՍՐՁԱԿՈՒՐԴՈՎ ՖՐԱՆՍԱ ԿԷ ԴԷՆԻ

Բարձր Գոմիսէրը թեան Հալէպի պատուերակ պ. Լավասէրը արձակուրդով Ֆրանսա կը մեկնի։

Բարակցութեան ընթացքին փոխանորդութիւն իր տեղը պիտի գրաւէ Հալէպի քաղաքական բաժնի վարիչ՝ Պ. Ռու։

ԼԻԲԱՆԱՆՑԻ ԸՆԹՐՈՂՆԵՐՈՒ ՆՈՐ ՑԱՆԿԸ

Լիբանանի ընտրողներու նոր ցանկը պատրաստուած է։ Ըստ այդ ցանկին ընտրողներու թիւը բարձրացած է 177,000 ի, նախապէս 171 000 էր։

ՄՅՐՕՆԻ ՊԱՏԻՐԵԱՐԳԻՆ ԿՈՆԴԱԿԸ

Ցեղապետ Մարօնի Պատիրեարգին Հրեաներու դէմ Հիթլէրեան հալածանքներուն առթիւ հովուական թուղթ մը հրատարակած է ուրկէ կը քաղենք հետեւեալ տողերը։

«Ահաւասիկ Հիթլէրեան Գերմանիան որ կը մտնայ քրիստոնէական կրօնքին պատուէրները։ Ան կը հալածէ խեղճ Հրեաները որոնց միակ յանցանքն Հրեայ լլլալն է։ Մեր է ուրեմն այն խղճի ազատութիւնը զորը տերմանները յայտարարած են։

Շատ իրաւամբ է որ բոլոր աշխարհի մեր կաթոլիկ եղբայրները կը զատապարտեն Գերմանիոյ բռնած դիրքը և իրենց համակրութիւնը կը յայտնեն իրենց հրեայ եղբայրներուն Մենք ալ կը միանանք այս գեղեցիկ շարժումին որ ներշնչուած է Աւետարանէն։ Զարմանա՞նք որ Հրեաները մեր եղբայրներն են աշխարհի մէջ և թէ անոնց մէջէն է որ եղած են Քրիստոս, Կոյսն Մարիամ. Ս. Յովսէփ, Ս. Յովհաննէս Մկրտիչ, առաքեալները և Մարգարէները։ Ն'ազնիւ Աստուծոյ, Հրեաներու մասուն փրկութեանը համար»,

ՊՍՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԹԻՒԸ 25 ԱՌ 100 ԿԸ ԶԵՂՋՈՒԻ

Սիւրիոյ Խորհրդարանը իր վերջին նիստին մէջ ընդունեց պաշտօնէութեան թաւյն հարիւրին 25 ը զեղջելու համար, Գանձային Նախարար Շաֆէր Նիյմէթ պէյ Շապանի ըրած առաջարկը։

Օրէնքը վաւերացուած բլլալով Հանրապետութեան Նախագահին կողմէ՝ արդէն գործադրութեան դրուիլ սկսած է։

Այս աւթիւ դժգոհութեան ցոյցեր իրարու կը յաջորդեն։ Շատեր գոհ են, ուրիշներ գժգոհ։ Կարգ մը մարդիկ ալ պահանջած են որ նախապէս օտար պաշտօնեաներ գործէ հանուին։

Արդէն գործէ հանուած էն Դամասկոսի եւ Հալէպի պանդոկի արտօրէնները՝ պ.պ. Մազհար պէյ Պաքրի եւ Սալահէտտին պէյ Պաքրի, երկուքն ալ յայտնի ազատականներ։

Այս օրէնքէն ազատ պիտի բլլայ Բէսա— Հեռագրատան պաշտօնէութիւնը։

ԿԱՀԱՒՈՐՈՒՍԹ սենեակի մը պատ ունեցողները թող դիմեն «Լիբանանի» Վարչութեան։

ՑԱՑՏՐԱՐՈՒԹԻՒՆ,

Այսու կը յայտարարենք մեր յարգելի ընթերցողներուն և նայ հասարակութեան, որ Լիբանանի Հաճրապետութեան Նախագահ պարոն Շարլ Տէպպասը արտօնած ունի, ուր ամիսներէ ի վեր կա ռավարութեան կողմէ աճուրդ ժամանակի մը համար կախակառուած, «ԼԻԲԱՆԱՆ»ի վերաբերեալ տարակուսիները։

Վերաճրատարակուող «Լիբանանի» խմբագրապետ է հրատարուած ժուրնալիստ Պ. Սիւնիք, որ ձեռնարկած է թերթի խմբագրումի գործին մէջ լուրջ բարեփոխութեանց։

Վերաճրատարակուող «Լիբանանի» առաջին թիւը այս կը սեսնէ յառաջիկայ Շաբաթ օր, Յունիս 17, շաբեկան բովանդակութեամբ։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԼԻԲԱՆԱՆԻ»

Կարդացէք եւ տարածեցէք

"ԼԻԲԱՆԱՆ,,

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՍԽԱԼ ԹԵՐԹԸ

Բոլոր բաժանորդները իր Բուէր պիտի առնան, ոյոն տարուայ վերջը

Եւրոպական ճանաչուած ճեղինակ

ՍՐԲԻՒՐ ՊԷՐՆԷՏԻ — ՊԷԼԳԷԿՕՐ —

Զգայացուցիչ 400 էջնոց ռոմանը՝ մաքուր կազմով

ՍԻՆԷՄԱ ՔՐԻՍԹԱԼ

Ամսոյս 19էն սկսեալ կը բեմադրուի

Լուսնի Լոյսին

Առեւելեան արուեստին յոյժ պատիւ բերող Եգիպտական տրամա

Հիթլէրեան դրօշակը երրորդ անգամ բլլալով վար կառնուի Երուսաղէմի մէջ

Գերմանիոյ նոր դրօշակը որ Հիթլէրն ու իր միջնադարեան հալածանքները կը խորհրդանշէ, երրորդ անգամ բլլալով վար կ'առնուի զարմանալի եւ խորհրդաւոր պայմաններու տակ։

Հակառակ պաղեստինեան ոստիկանութեան գիշեր ու ցերեկ ի գործ դրած աշխուժ հսկողութեան, աւտոբուսեան ժամը 10ին, բոլորովին անտարբեր երեւցող երիտասարդ մը, Հիտլերական պատկեր ցերեկ կը մնէ, կ'սկսի դրօշակին 18 մէթրոց կայմն ի վեր բարձրանալ։

Ոստիկանները կարծելով որ ճեռագրի պարտօնեայ է ան, բան մը չըսին, ու երիտասարդը պաղարիւնութեամբ չուանը կտրեց, դրօշակը վերցուց եր տանիքին միւս կողմն անցաւ գնաց։

Երբ ոստիկանները հասկցան եղածը, արդէն դրօշակ ու երիտասարդը անհետացած էին։

Բազմաթիւ երիտասարդներ ձեռնակալուեցան, բայց անմեղ բլլալնին հաստատելով ետ ձգուեցան։ Իսկ հիմայ Հիթլէրի դրօշակը կը պահպանեն Անգլիացի ոստիկաններ՝ զեն ի ձեռին։

ԳՐՕՇՈՒՐՆԵՐՈՒ ՍԷՏԻՊՆ ԿԸ ՀՈՒՇՈՒԻ

Պէյրութի գրաշարներու Սէնտիքան որ կազմուած էր 1922 ին, Նախագահական հրամանաւ լուծուած է։

Այս աւթիւ բազմագիր գրկուած է տեղական մամուլին և կառավարութեան։ Ու հակառակ գրուած արդելքին Սէտիքան շարունակած ելլալով իր ժողովները, սովկեանութիւնը սարսռուած է մինչեմել։

նրան իր այլուր փոխադրելու մասին խորհրդային իշխանութեան ուրուշումը, առանց սակայն յայտնելու թէ ուր պիտի փոխադրուի։

Ցարը սկզբում մերժում է ընդունելու այսինքն հնթարկուելու իր մասին արուած որոշման, պատճառաբանելով ձմրան ատաղիկ ցուրտերը և թագաժառանգ Ալէքսէյի հիւանդ վիճակը։ Բայց երբ Գոլոշչեկինը փափկանկատ կերպով հաստատում է նրան, որ ինքը լիազօրուած է մերժումի պատգամային դիմելու իր կողմէ անկրաժեշտ համարուած միջոցներին՝ իշխանութեան որոշումը գործադրելու նպատակաւ, այլ խօսքով, որ ինքն իրաւունք ունի, ի պահանջել հարկին, բռնի կերպով ցարը առանելու այնտեղ, ուր որ որոշած ունի խորհրդային կառավարութիւնը, այն ժամանակ գահազուրկ կայսրը տեղի է տալիս եղած լուռ և ոգեկոչ, լուրջ ոգեաւորիչին առջեւ։

Եւ այսպէս, ցարը իր ընտանիքը, այն է— կինը, երեք աղջիկները և հիւանդ որդին Թոլոնելով Տոմսկ քաղաքում, ի հարկէ որ բռնաբարուած վիճակի մէջ, մեկնում է Գոլոշչեկինի հետ միասին, առանց որոշապէս գիտնալու թէ ուր և ինչու համար են առնում իրեն։ Նա կարծում է թէ իրեն Մոսկվա են առնում, որպէսզի Գերմանիոյ հետ քնքուշ սեպարատ— անջատ հաշտութեան պայմանագիրը ստորագրէ։

Մինչդեռ նա տարուում է Եկատերինբուրգ քաղաքը, որտեղ ցարի և իր ընտանիքի համար խորհրդային իշխանութիւնը արդէն պատրաստած ունի եղեր բնակութեան համար ուրուի հիշը բռնաբարութեան համար հարմարագոյն Ապատիէվի երկյարկանի տունը։ Այդ տունը բռնած ունէր գիրար խաչաձեւաձեւ երկու փողոցներու անկիւնը. և որը գուրսի, այսինքն փողոցներու, կողմէ, մինչեւ տունի կտուրը բարձրացուած տախտակէ պարիսպով մը շրջապատուած է եղել, և այդպիսով բոլորովին անհնար դարձրած ցարի և իր ընտանիքի օրենք յարաբերութիւն արտաքին աշխարհին հետ։ Երկաթուղու քաղաքի կայարանից գիշերը՝ ավտոմոբիլով և զարգուզի ճանապարհներով ցարին փոխադրում են իրեն և իր ընտանիքին համար նախօրօք պատրաստուած տունը, փասարէնբանը, ամսոն միջոցներ ձեռք առնելով, քաղաքացիներու, ժողովուրդի հետ տեսակցիներու անկարելի դարձնել կարենալու համար։

Ես այսպէս, աշխարհի էն մեծագոյն աշխարհատարածութեան երբեմնի մեծադոյզ ինքնակալը, որ ելաւ ցեղի մը «Անկախութեան իրաւունքը» պաշտպանելու համար Գերմանիոյ և Աւստրո—Հունգարիոյ դէմ զենք ուներ պարզած, այժմ գահնկեց և փոքրաշուրջ վիճակի մէջ կեանքի գառնութիւններնէ տպրում։

Գոլոշչեկինը ցարի մը-տանգութիւնը փարատելու համար ոգեւոր է տալիս, որ ցարական ընտանիքի կեանքը վեր կը լինի ամեն ապահովութիւնէ, և թէ էնց ինքն է որ նրանց պիտի որ փոխադրէ Եկատերինբուրգ, ցարի մօտ, երբ Ալէքսէյ Նիկոլայեվիչը կ'ապաքինէ. և կարելի կը լինի նրա անվտանգ փոխադրութիւնը։

Եւ Գոլոշչեկինը կատարում է ցարին ասուն իր խօսքը։ Չի խորհուրդային իշխանութեան որոշումը նախապէս այդպէս էլ եղած է որ,— նախ ցարը փոխադրել, և ապա որոշ ժամանակ յետոյ էլ նրա ընտանիքը։

Անշուշտ որ ցարական ընտանիքը Եկատերինբուրգ փոխադրելու որոշումը գրաւել առաջ խորհրդային իշխանութիւնը քննարկել է եղած թէ ցարի և թէ նրա ընտանիքի առողջական վիճակի և տրամադրութեանց մասին, հետեւապէս և Ալէքսէյի հիւանդ լինելը նա գիտէ եղեր։ և այդ իսկ պատճառաւ էլ նրա փոխադրութեան անկարելիութիւնը, և ապա դրա հետեւանքէ էլ ցարուհին Տոմսկ մնալու հաւանականութիւնը, և լսա այդ էլ իր որոշումը ասած։

Եւ այսպէս, 1918. թ. Մայիս 18—ին, Տոմսկ քաղաքին մէջ մնացած ցարուհի Ալէքսանդրան թագաժառանգ Ալէքսէյը և ցարի երեք աղջիկները իրենց իրերով և իրենց մօտ գտնուող ծառաներով միասին փոխադրուում են Եկատերինբուրգ ցարի մօտ, այն է ճարտարապետ Իպատիեվի երկյարկանի և արտաքին աշխարհից ատատի կերպով կղզիացուած տունը։ Այդ տունի վերի յարկը յատկացուած է եղել Նիկոլայ Բ. ի և իր ընտանիքին համար իսկ վարի, այսինքն ներքնայարկն էլ պահակներուն համար։ Բացի ցարական ընտանիքից, նոյն տունին մէջ գտնուում էին նաեւ հինգ ծառաներ ոտասուներ և ապա դրանցից միայն փոքրիկ աղջիկը։

(Շ բուեռ 41 ի) ՍԻՒՆԻՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

160 ՀՈԳԻՆՈՑ ԵՐԿՍԵՌ ԵՐԳԶԱՆՈՒՄԸ ԳՈԼՍՈՑ ՄԷՋ

Բնթայի թռչ. խաչերգոյ տաճնապետ Տոքթ. Անտրէ Վահրամի նախաձեռնութեամբ, և ուրիշ ծանօթ անձերու օժանդակութեամբ։ Գոլսոյ մէջ կազմուած է 160 հոգինոց պատկառելի երկսեռ երգչախումբ մը՝ որ Ապրիլ 28ին ասուած է իր առաջին համերգը, և որ ունեցած է մեծ և փայլուն յաջողութիւն մը։

Այս առթիւ Գոլսոյ հայ թերթերը հետեւեալը կը գրեն.—

«Հետաքրքրութիւնը այնքան մեծ էր որ, սամերը առաջուն ըստացած էին արդէն և հարկ չմնաց կիչէն բանալու։ Թէպէտ Պաշրի շնորհակ թատրոնը ծայրէ ի ծայր լեցուն էր։ Հրաւիրուած ծանօթ անձնաւորութիւններէն կուսակալի օգնական Ալի Ռիզա պէյ և Հալեպի վարիչները չէին կրցած գալ

Ցայտագիրը կիրարկուեցաւ յաջողութեամբ, ծափեր խլելով ներկաներէն։ Մասնաւորապէս շատ գնահատուեցան և կրկնել տրուեցան Կոմիտասի ժողովրդական երգերը։ Ցայտնապէս կ'երեւէր որ երաժշտագէտ Պ. Մինասեան ճիգ թափած է. կարելի եղածին չափ հարազատօրէն ներկայացնելու համար այդ երգերը։

Հանդէսին առաջնորդը կազմեց Օր Արքայի Պապիկեան, որ դերազանցեց ինքզինքը. ինչպէս կ'ըսեն։ Եւրոպական թէ հայկական կատարներու մէջ. անոր քնքոյշ, ճկուն և մարզուած ձայնը բացառիկ յաջողութիւններ ունեցաւ։ Մասնաւորաբար պատուով դուրս եկաւ Կալի Կուրչիի երգած կատարներուն մէջ, հարազատօրէն ցոլացնելով թռչուններու գեղգեղանքը»։

ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍՈՒՆ ՖԻԼՄ

1933 տարւոյ ընթացքին «Հայ Կինոն» հրապարակ պիտի հանէ հետեւեալ հայերէն խօսուն ֆիլմերը. «Երկու գիշերը», «Շունը», և «Գէպսոն»։

ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Մեծ թափով առաջ կը տարուի հեռագրատունի շինարարութիւնը Երեւանի մէջ։ Հեռագրատունը պիտի բաղկանայ 5 յարկէ և պիտի պարունակէ փոստի բաժանմունքը, կեդրոնական հեռագրատունը. նոր ատֆոմատիկ հեռախօսային կայանը 10 հազար բաժանորդներով, ռատիոկեդրոն։

Հեռագրատունի շինարարութիւնը պիտի արժէ մօտաւորապէս 1,200,000 ռուբլի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ

Հայաստանի Գործ. Կոմիտէի նախագահութիւնը Փոքր Հրաչեայ Ա. ճառերէնին շնորհած է «Գիտութեան վաստակաւոր գործիչ»ի կոչում։ Ինչպէս յայտնի է, փրոֆէսէորը տարեկ հայերէնի արմատական քննութեանը, որ 10 հազար էջերէ կը բաղկանայ և վեց հատորներէ կազմուած է։

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԵՐԳԱՐՇՏԱԳԷՏ ՆԻԿ. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 50—ԱՄԵԱՑ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Մ. Ա. Ամսոյս 13—ին Լէնինականի մէջ շուքով կը տօնուի բանմավաստակ երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեանի յիսնամեայ յոբելեանը։ Այս առթիւ Խ. Հայաստանի կառավարութիւնը որոշած է։

Բարձր գնահատելով վաստակաւոր երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեանի յիսնամեայ երաժշտական գործունէութիւնը, որը մեծ ժողովրդականութիւն և արժէքաւորում է ստացել ոչ միայն Հայաստանում և Անդրկովկասում, այլ եւ Խ. Միութեան մէջ։

Կենտգործկոմի նախագահութիւնը որոշում է՝

1.—Վաստակաւոր երաժշտագէտ Ն. Տիգրանեանի տալ ժողովրդական երաժշտագէտի կոչում։

2 Լէնինականի երաժշտական դպրոցը կոչել Նիկողայոս Տիգրանեան անուան։

3.—Առաջարկել Լուսժողկոմատին պետական հաշուով Ն. Տիգրանեանին ուղարկել ամառանոց և ցոյց տալ պատշաճ նիւթական օգնութիւն.

4.—Յանձնարարել Պետհատին հրատարակելու Տիգրանեանի երաժշտական երկերի ժողովածուն։

ՀԱԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ

Քարտուղար Ռ. ԴԱՇՏՈՅԵԱՆ — Նախագահ Ա. ԱՆԱՆԵԱՆ

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ ՄԸ ԻԲՐ ՄՐՑԱՆԱԿ 1500 ՏՈԼԱՐ ԿԸ ՍՏԱՆԱՑ

Նիւ Եորքի Ազգ. Դեղարուեստից վարժարանին մէջ Մայիս 2ին տեղի ունեցած է ամավերջի պարգեւաբաշխութիւնը։ 700 ուսանողներու մէջ առաջին հանդիսացած է նպաստաւոր բժշկի ուսանողներէն Սօս Մելիք Շահնազարեան և ստացած է մեծ մրցանակը, 1500 տոլար։

Հայ պատանի նկարիչը այս գարնան Եւրոպա պիտի գայ, նշանաւոր նկարիչներու գործերուն ծանօթանալու համար։

ԳՈՎԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամսոյս սկիզբներուն, քաղաքիս Սահակեան վարժարանի սրահին մէջ մասնաւոր հրաւիրագրերով հրաւիրուած 228 ազգայիններու կազմէ կրթական նպատակով ժողով մը գումարուած է Պ. Յ. Հայթաեանի նախագահութեամբ և ընտրուած մարմին մը, որ պարտականութիւն ունի նիւթապէս և բարոյապէս օժանդակելու Սահակեան վարժարանը դասընթացքի պակասմանէ։ Ընտրուած մարմնի անդամներն են Գ. Գ. Եպ. Տարտաղանեան, Մ. Վեհաւնի, Գ. Երեւանեան, Վ. Վարժապետեան. Մ. Աղազարեան, Ս. Թաթուլեան, Ատամնաբոյժ Պարսնեան և ուրիշ քանի մը ազգայիններ։

Իսկ իբր ատենագրաց նախագահ, ժողովի կազմէ միաձայնութեամբ ընտրուած է Կիլիկիոյ ծերունազարդ կաթողիկոս Սահակ Խապաեան։

Ըստ մեր ունեցած տեղեկութեանց, նորընտիր մարմինը արդէն դիմած է Ազգ. Իշխանութեանց՝ իր օրինականութիւնը հաստատելու համար։

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Այսօր, Անթիլիասի մէջ տեղի պիտի ունենայ Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ.ի եկեղեցական պաշտօնավարութեան երեսուներորդ, ապա նոյն Կաթողիկոսութեան Աթոռին Լիբանանի մէջ հաստատման, և Անթիլիասի գպրեվանքին հիմնարկութեան եռամեայ Յոբելինական միացեալ հանդիսութիւնները։

Հրաւիրուած է նաև Ն. Վ. Լիբանանի Հանրապետութեան նախագահ Պ. Շարլ Տէպպաս։

ԼԵԶՈՒՆԻԴ ԹԱՆՁՐԱՄԱԾ Է?

Ասիկայ անպատճառ գէր ժառանգութեան մը նշան է

ԱՆՄԻՋՈՊԷՍ ԴԻՄԵՑԷՔ

Մանիէզիա Ս. Բելլեկրինցի



Զգուացէ՛ք խարդախուածներէ

ՏՊԱՐԱՆ

ԼԻԲԱՆԱՆ

ՍԵՓԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ

ՀԱՅԵՐԷՆ—ՖՐԱՆՍԵՐԷՆ—ԱՐԱԲԵՐԷՆ ՆՈՐ ԵՒ ՀՈՆ ՏԱՌԵՐՈՎ

Տպագրական ամէն տեսակ գործ

Հրատարակութիւններ, Առեւտրական Թուղթեր— Տետրակներ, Դեղարանի վերաբերեալ Տոմարներ—Ցուցագիրներ (Étiquettes) եւ Ցայտարարութիւններ, Տոմսեր, Հրաւիրագրեր եւայլն։

ԻՆՉՊԷՍ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՆԵՐ

Դասագիրքեր, Տետրակներ. Քարթեր, վիճակագրեր եւն։

Ամենամաչելի գիներով։

Տուփեր

Կը պատրաստուին ամէն տեսակ տուփեր

ԿՕՇԻԿԻ, ԴԼԽԱՐԿԻ, ՇԱՊԻԿԻ, ԵՒ ՀՍՐՍՆԵԿԱՆ

ԿՍՏԱՆԶԵՔ ԱՅՍՊՐԱՆՔ ԱՄԷՆ ՏԵՂԵՐԷ

Մարութիւն, Ճաշակ, Ճշտապանութիւն, մատչելի գին

Դիմել՝ «ԼԻԲԱՆԱՆ»ի հասցէին

Սիւրիոյ եւ Լիբանանի կոփամարտի ախոյեան՝

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆԵԱՆ

Սկսած է կոփամարտի դասեր տալու ատանութեան փափաքողներ կրնան դիմել

Beirut Sporting House-ի սիրտը որ կը գտնուի Զէյրունիէ.— Հասուզ-Սասաթի փողոց Զիգուրատիկ Սիկերման մօտերը

Ս. ՀԱՋԱՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՄԱՍՆԱԳԷՏ ԳԷՕՐՈՒԹ

ԱԿՆՈՑԱՎԱՃԱՌՔ ԳՈՒՐՃ ԹԻՒ—48

Կը պատրաստեն նրբշկական դեղագրերու համաձայնագիտական մեքօսով ակնոցներ։ Ունին ճախարհանուչակ Zeiss—Punktal Ակնոցի ապակիներ, Հեռադիտակներ, եւ Լուսանկարչական մեքենաներ։

ԽՆԱՄԵԱԼ ԳՈՐԾ, ՋԱՓԱՒՈՐ ԳԻՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՃԱՐԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԳԵՐԶԱԿ

ՍՈՒՔ-ԷԼ-ՆՈՒՐԻԷ

ԳԷՂՕՐՈՒԹ

ԾԱՍՆԱՃԻՒՂ ԴԱՄԱՍԿՈՍ

Սաւէ-էլ Խօճա

ՅԱԿՈԲ ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՏԱՂԶԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Արժանդին Փողոց

ԳԷՂՐՈՒԹ



ՖՕԹՕ ՄԱՔԻՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԷՆԵԱՆ

Կարող փողոց

ԳԷՂՐՈՒԹ

ԿԼԿԼԱԿ ԾԽՈՂՆԵՐՈՒՆ

Նամուր եւ Շէտուէտ

ԹԷՄՊԷՔԸ

Լաթաքիոյ եւ Հինգի լաւագոյն Թէմպէնէ է

ԿՀ ՄԱԽՈՒԼԻ Բոլոր սիկարէթի վաճառականներուն քով